

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՌՔՈՐՈՇՈՒՄԸ  
ԱՆԴՐՎՈՆՅԵՂԵՐԱՑԻԱՅԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ  
(1919 Թ. ՕԳՈՍՏՈՍ - 1920 Թ. ԱՊՐԻԼ)**

**Գ. Յ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

1919 թ. օգոստոսին Անդրկովկասից անգլիական զինվորների հեռանալուց հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին քեմալական Թուրքիայի համար՝ Հայաստանը վերջնականապես կործանելու և իր սահմանները Ադրբեջանին մոտեցնելու: 1919 թ. հուլիսի 10-ից օգոստոսի 6-ը Էրզրումի համաժողովում թուրք ազգայնականները պաշտոնապես հայտարարեցին իրենց մշակած անգիջում հակահայկական քաղաքականության մասին. «Ոչ մի թիզ հող Հայաստանին չենք զիջի»<sup>1</sup>: Ադրբեջանն ու Վրաստանը, ոգևորված քեմալական Թուրքիայի ակտիվ աջակցությունից, ձգտում էին Հայաստանի հետ տարածքային վեճերը լուծել ռազմական ուժով: 1919 թ. սեպտեմբերի 25-ին Ա. Խատիսյանը Փարիզում Հայաստանի Հանրապետության և հայկական ազգային պատվիրակությունների նախագահներ Ա. Ահարոնյանին ու Պողոս Նուբար փաշային ուղղած հեռագրում տեղեկացնում է, որ Ադրբեջանը տենդագին «Պատերազմի նախապատրաստություն է տեսնում, Չանգեզուրը գրավելու համար: Թուրքիայի և Ադրբեջանի ակնդները շարունակում են դավեր նյութել Հայաստանի դեմ»<sup>2</sup>: Իրենց ռազմական ծրագրերն իրականացնելու նպատակով Թուրքիայի անմիջական թելադրանքով կնքվեցին ռազմական գաղտնի դաշինքներ, որոնք ուղղված էին ինչպես Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության դեմ:

Սվազի համաժողովում (սեպտեմբերի 5-ից 11-ը) պաշտոնապես վերահաստատվեցին Էրզրումում քեմալականների ընդունած բոլոր որոշումները, նրանց քաղաքականությունը Թուրքիայի ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ<sup>3</sup>, որն իր ողջ սրությամբ ուղղված էր Հայաստանի դեմ: Հատուկ որոշումով քեմալականները հայտարարում էին, որ իրենք վճռական կոիվ կմղեն ամեն մի շարժման դեմ, որն իր առջև խնդիր կդնի ստեղծել անկախ Հայաստան<sup>4</sup>: Այդ քաղաքականության ջատագովներն էին նաև համաժողովին մասնակցող Խորհրդային Ռուսաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչները<sup>5</sup>:

Կարևոր է նշել, որ Մուստաֆա Քեմալի գլխավորած Միլլի շարժումը հաջողություն չէր ունենա, եթե չստանար որևէ խոշոր տերության աջակցությունը: Իսկ այդ տերությունը եղավ Խորհրդային Ռուսաստանը, որն այդ ժամանակ կենաց ու մահու կոիվ էր մղում միջազգային իմպերիալիզմի դեմ: Քեմալը կարողացավ

<sup>1</sup> **Мустафа Кемаль**, *Путь новой Турции, Подготовка Ангорской базы 1919-1920*, т. II, М., 1932, էջ 120, տե՛ս նաև **Հր. Միմոնյան**, *Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը*, Եր., 1986, էջ 502:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.355, մաս I, ք. 206\*:

<sup>3</sup> Տե՛ս **Кемаль Ататюрк**, *Избранные речи и выступления*, М., 1966, էջ 49:

<sup>4</sup> Տե՛ս **Հր. Միմոնյան**, *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից*, Եր., 1991, էջ 366:

<sup>5</sup> Տե՛ս «Յառաջ» լրագիր, Եր., 12 դեկտեմբերի 1919 թ.:

վարպետորեն օգտագործել այդ հանգամանքը և իր ղեկավարած շարժումը նույնպես ներկայացնել իմպերիալիզմի դեմ ուղղված հեղափոխական պայքար, որն անգամ ունի համայնավարական կարգեր հաստատելու միտում: Այդ խայժող կուլ տվեցին Խորհրդային Ռուսաստանի ղեկավարները և Քեմալի հետ մտան դաշինքի մեջ՝ համակողմանի օգնություն ցույց տալով նրան<sup>6</sup>: 1919 թվականին Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հարաբերությունները մտել էին բարեկամական հունի մեջ գաղտնի և հայտնի դաշնագրերով: Կարո Սասունին գրում է. «Բացահայտ էին բոլշևիկեան Ռուսաստանի ձգտումները, որոնք ըստ ամենայնի կը գուգաղիպեին թրքական շահերուն, և Հայաստանի ու հայ ժողովրդի գոյությունն իսկ կը դառնար չնչին արժեք մը Ռուսաստանի աչքին»<sup>7</sup>: Խորհրդային Ռուսաստանը «Բոլորովին կասկածելի առաելութիւններու համար,- գրում է Չարեվանը,- կը զոհէր Թրքահայաստանի բնիկ ժողովրդին դարաւոր իրաւունքը իր հայրերու հողին վրայ»<sup>8</sup>: Փաստորեն Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի դաշինքն ուղղված էր նաև Հայաստանի ու հայության դեմ: Հայաստանի դրությունն ավելի էր ծանրանում նրանով, որ նրա անմիջական հարևանները՝ Վրաստանն ու Ադրբեջանը, 1919 թ. հունիսի 16-ին կնքեցին ռազմական դաշինք\*, որն ուղղված էր նաև Հայաստանի դեմ: Ելնելով այդ բարդ իրավիճակից՝ Հայաստանի կառավարությունը շտապեց մերձեցման ուղիներ որոնել Վրաստանի հետ՝ խափանելու համար Ադրբեջանի հետ նրա ռազմական դաշինքի գործողությունները: Սվազի համաժողովում հասկացել էին Հայաստանի կառավարության դիվանագիտական քայլի իմաստը և արագ դիմեցին կտրուկ քայլերի՝ խափանելու հայ-վրացական հնարավոր մերձեցումը: Անշուշտ պատահականություն չէր, երբ համաժողովի ավարտից հետո քեմալականներն անմիջապես բանակցություններ սկսեցին Վրաստանի իշխանությունների հետ, և սեպտեմբերի վերջերին ստորագրվեց երկրորդ վրաց-ադրբեջանական ռազմական գաղտնի դաշինքը: Այն իր բովանդակությամբ ավելի հարձակողական ու ավելի ռազմատենչ էր նախորդի համեմատությամբ: Դաշինքը բխում էր թե՛ քեմալական Թուրքիայի և թե՛ վերջինիս «բարեկամ» Խորհրդային Ռուսաստանի ռազմավարական շահերից: Դրանով հնարավորություն էր ստեղծվում հարվածելու թե՛ Ռուսաստանի հարավի Կամավորական բանակին, թե՛ նրա բարեկամ Հայաստանի Հանրապետությանը: 1919 թ. դեկտեմբերի 12-ին Երևանում լույս տեսնող «Յառաջ» լրագիրը «Տաճկաստան և Անդրկովկաս» առաջնորդող հոդվածում հաստատում է Կուրանում լույս տեսնող «Կուրանսկայա զեմլյա» լրագրի հետևյալ տեղեկությունը. «Բոլշևիկները ձգտում են դժվարացնել Կամավորական բանակի դրութիւնը, աջակցում են Վրաստանի և Ադրբեջանի անջատ հակումներին: *Երիպասարդ թիրքերը, որոնք մտել են ազգային խորհուրդների կազմակերպությունների մեջ՝ ամեն կերպ աջակցում են Ադրբեջանին և Վրաստանին, որպեսզի իրենց համար դաշնակիցներ չենք բերեն Հայաստանի դեմ, որի գոյութեան հետ չեն կարող հաշտուել*»:

Բոլշևիկներին եռանդուն կերպով օգնում են թուրքերը, որպեսզի դժարացնեն դաշնակիցների դրութիւնը Տաճկաստանում: Այս բոլորը հաստատվում են հետևյալ փաստերով:

<sup>6</sup> Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1926, մարտ, էջ 70, նույնը, 1940, դեկտեմբեր, էջ 143:

<sup>7</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1928, № 3, էջ 109:

<sup>8</sup> Չարեվանը, Ինչ կը ծրագրեն թուրքերը. Միացեալ անկախ Թուրանիա, 1926, էջ 167:

\* Մանրամասն տե՛ս Ք. Պետրոսյան, 1919 թ. հունիսի վրաց-ադրբեջանական ռազմական դաշինքը և Հայաստանը. «Հայոց մեծ եղեռն 90», հոդվածների ժողովածու, Եր., 2005, էջ 350-365:

Կ. Պոլսի Վրաստանի ներկայացուցիչ Գեղիլաձե՛ն շատ մօտ յարաբերութեան մէջ է Զիւրուք-Մուլի-Մահմե՛դ փաշային և բանակցում է երիտասարդ թուրքերի հետ միասին գործողութիւնների դիմելու Հայաստանի Հանրապետութեան, կամատրական բանակի և դաշնակիցների դէմ: Բազում և Բաթումում տեղի են ունեցել բանակցութիւններ Վրաստանի և Ադրբեջանի, երիտասարդ թուրքերի և բուլշակիների ներկայացուցիչների միջև: Թուրքերը բուլշակիներից ստացել են մեծ գումար»<sup>9</sup>:

Որ վրաց-ադրբեջանական ռազմական երկրորդ դաշինքն հիմնականում ուղղված էր Կամավորական բանակի և Հայաստանի դէմ, վկայում է նրա բովանդակութիւնը.

- – Ռուսներին թույլ չտալ մտնել Անդրկովկաս:
- – Ադրբեջանն ու Վրաստանը բուլշակիների հետ միասին պետք է կռվեն դաշնակիցների դէմ՝ նրանց Անդրկովկասից հեռացնելու համար:
- – Հայերին թշնամի համարել:
- – Ադրբեջանը Հայաստանին պատերազմ հայտարարելու դեպքում Վրաստանը պարտավոր է շրջափակել Հայաստանի հաղորդակցության բոլոր ճանապարհները:
- – Վրացիները պարտավորվում են երկու զորամաս (դիվիզիա) զորք հանել գեներալ Ա. Դենիկի՛նի դէմ Պետրովսկի ուղղությամբ:
- – Ադրբեջանը գեներալ Ա. Դենիկի՛նի դէմ գործելու համար պարտավոր է մի զորամաս զորք հանել Հայաստանի հյուսիսարևելյան սահմանների երկայնքով:
- – Երիտասարդ թուրքերի գործողությունների կենտրոն պետք է լինի Անդրկովկասը, Տրապիզոնը, Ռիզեն և Բաթումը:
- – Երիտասարդ թուրքերը պարտավոր են 15000 ասկյար ուղարկել Ադրբեջան և Վրաստան՝ օգնության համար, ինչպէս և Հայաստան՝ այնտեղ մուսուլման ազգաբնակչության ապստամբություն բարձրացնելու նպատակով<sup>10</sup>:

Այդ ռազմական դաշինքն անմիջապէս գործողության մէջ դրվեց: Սեպտեմբերի վերջին Վրաստանի կառավարութիւնը, հավատարիմ իր դաշնակցային պարտավորությանը, գնացքով Բաքու ուղարկեց 400 բուլշակի՝ գեներալ Ա.Դենիկի՛նի հարձակման ժամանակ նրա դէմ կռվելու համար<sup>11</sup>: Ադրբեջանի պաշտպանությունն ամրապնդելու նպատակով 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբերին Բաքու ուղարկեց ութ գնդացի, 3 վազոն արկ, տարբեր տրամաչափի փամփուշտներ, հրացան, մեկ գումարտակի համար անհրաժեշտ զինամթերք և 48 սպա՝ ադրբեջանական զորամասերում ծառայելու համար<sup>12</sup>:

1919 թ. սեպտեմբերի 20-ին, երբ Ադրբեջանը Ջեբրայիլի գավառից սկսեց իր առաջին արշավանքը Չանգեզուրի վրա<sup>13</sup>, նույն ամսվա վերջին Վրաստանի կառավարութիւնը տնտեսական շրջափակման ենթարկեց Հայաստանի Հանրապետությանը: Փարիզում լույս տեսնող «Վերածնունդ» շաբաթաթերթը հոկտեմբերի 30-ին հաղորդում էր, որ Հայաստան առաքվող ապրանքները «Բաթումի մէջ կը մնան մինչև որ պետութիւնները հարկ եղած ճնշումը գործ դնեն Վրաստանի Կառավարության վրայ:

<sup>9</sup> «Յառաջ», լրագիր, Եր., 12 դեկտեմբերի 1919:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>11</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.197, ք.1:

<sup>12</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.33, ք.33, ֆ.204, ց.1, գ.133, ք.30,33,38,ֆ.276, ց.1, գ.183, ք.122:

<sup>13</sup> Մանրամասն տե՛ս Հ. Հարությունյան, Լեոնային Ղարաբաղը 1918-1921, Եր., 1996, էջ 186-199:

Հայաստանի պաշարումը Վրաստանի կողմէ, որով անհրաժեշտ եղած ուղղ-  
մամբերը և այլ զանազան ապրանքներու մուտքը կարգիլուի Հայաստան և որով  
այդ երկիրը սովամահի կենթարկուի, կը հաստատէ շատ տեղերէ արտայայտուած  
այն կարծիքը, թէ որոշ համաձայնութիւն կայ Վրաստանի և թուրքական նասիօ-  
նալիստների միջեւ»<sup>14</sup>:

Սվազի համաժողովում ուրվագծվեց նաև թուրք-աղբրեջանական ուղղու-  
կան դաշինքի ստեղծման գաղափարը, որն ուղղվելու էր նաև Հայաստանի դեմ:  
1919 թ. հոկտեմբերի 29-ին\* Կ.Պոլսում Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Ջևադ  
փաշան և Աղբրեջանի ներկայացուցիչ Քերիմովը ստորագրեցին թուրք-աղբրեջա-  
նական ուղղուկան գաղտնի դաշնագիր: Նրա 1-ին կետով երկու կողմերը պար-  
տավորվում էին պահպանել միմյանց տարածքային ամբողջականությունը: Եթե  
կողմերից մեկը ենթարկվի հարձակման, մյուսը պարտավորվում է ուղղուկան օգ-  
նություն ցույց տալ: Դաշինքի 9-րդ կետով Թուրքիան պարտավորվում է աղբրե-  
ջանական բանակի համար պատրաստել հրահանգիչներ, սպաներ, ասկյարներ  
ու միաժամանակ վերապատրաստել, հարստացնել աղբրեջանական սպաների  
ուղղուկան գիտելիքները: 10-րդ կետով Թուրքիան պարտավորվում է աղբրեջա-  
նական բանակին տրամադրել հրանոթներ, հրացաններ, հանդերձանք և այլ ուղ-  
մամբերը: 11-րդ կետով Աղբրեջանի կառավարությունը պարտավորվում է չկնքել  
որևէ համաձայնագիր այլ պետությունների հետ առանց Թուրքիայի գիտության  
ու համաձայնության<sup>15</sup>:

Թուրք-աղբրեջանական-վրացական ուղղուկան համագործակցու-  
թյունը Կամավորական բանակի առջև դրեց նոր խնդիրներ, որոնց լուծումը պա-  
հանջում էր նոր մոտեցումներ փոփոխվող քաղաքական իրադրության նկատ-  
մամբ: Գեներալ Ա. Գենիկիին անմիջապես տեղեկացվել էր Անդրկովկասի անցու-  
դարձերի, քաղաքական տեղաշարժերի և ուղղուկան գաղտնի դաշինքների գո-  
յության մասին: 1919 թ. հոկտեմբերի վերջին Անդրկովկասի ռուսական հետախու-  
զությունը Կամավորական բանակի վարչության պետին ուղղած զեկուցագրում  
հաղորդում է, որ վրացիների և մահմեդականների հարաբերությունները ամրա-  
պնդվում են Աղբրեջանի հետ ստորագրած երկրորդ ուղղուկան գաղտնի դաշ-  
նագրով (1919 թ. սեպտեմբեր), որն ուղղված է Ռուսաստանի հարավի դեմ<sup>16</sup>: Գե-  
ներալ Ա. Գենիկիին տեղեկացված էր նաև թուրք-աղբրեջանական ուղղուկան  
գաղտնի դաշինքի (1919 թ. հոկտեմբերի 29-ը) գոյության մասին: Այդպիսի բարդ  
ուղղուկան դրության պայմաններում, անգամ երբ Անդրկովկասից հե-  
ռացել էր կամավորական բանակին խանգարող անգլիական զորքը, գեներալ Ա.  
Գենիկիին չէր կարող ուղղուկան գործողություններ ծավալել Աղբրեջանի և  
Վրաստանի դեմ: Նա այդ քայլը չէր ձեռնարկի գլխավորապես այն պատճառով,  
որ իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր Մոսկվայի մոտ բուլշևիզմի դեմ ծավալվող  
ուղղուկան գործողություններում: 1919 թ. (սեպտեմբերի 6-14) Թիֆլիսում գեներալ  
Ն. Բարաթովն Ա. Խատիսյանի հետ հանդիպման ժամանակ հայտնել էր, որ մինչև

<sup>14</sup> «Վերածնունդ» շաբաթաթերթ, Փարիզ, 30 հոկտեմբերի 1919 թ., էջ 342:

\* Ս. Վրացյանը իր հուշերում սխալմամբ դաշինքի ստորագրումը հիշատակել է նո-  
յեմբերի 29-ը, և այդպես շրջանառվել է հայ պատմագիտության մեջ (տե՛ս Ս. Վրացյան,  
Ինչու և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1940,  
դեկտեմբեր, էջ 144, նույնի՝ Հայաստանը բուլշևիզմի մուրճի և թուրքական սալի միջև,  
Պեյրոթ, 1953, էջ 41): Հայաստանի Ազգային արխիվում պահպանվող թուրք-աղբրեջա-  
նական ուղղուկան դաշինքի կրկնօրինակը վկայում է, որ այն ստորագրվել է ոչ թե նոյեմ-  
բերի, այլ հոկտեմբերի 29-ին:

<sup>15</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.184, ք.67-68:

<sup>16</sup> Տե՛ս ԳԱ ՔՓ, ֆ.446, օղ.2, ձ.34, լ. 96-97:

Մոսկվայի գրավումն Ադրբեջանի և Վրաստանի դեմ ոչ մի ռազմական գործողություն չի նախատեսվում: Կամավորականներն ասում էին, որ տվյալ պահին իրենց ուժերը պետք են բուլղարիկների դեմ պայքարելու համար<sup>17</sup>: Կամավորական բանակի հաշվարկով Ադրբեջանի և Վրաստանի գրավման համար յուրաքանչյուրի դեմ անհրաժեշտ էր ուղղել հինգ զորամաս, սակայն ռազմաճակատներից գեներալ Ա. Դենիկինը չէր կարող հանել այդքան ուժ, որովհետև շարունակվում էին վճռական ռազմական գործողությունները Մոսկվայի համար<sup>18</sup>: Կար նաև մեկ ուրիշ կարևոր հանգամանք. Վրաստանի և Ադրբեջանի անկախության դեմ ռազմական ուժի կիրառման դեպքում Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը կզրկվեր Համաձայնության երկրների օգնությունից: Սակայն անժխտելի իրողություն է, որ գեներալ Ա. Դենիկինը չէր կարող հրաժարվել նաև հարուստ Բաքվից, որովհետև վերջինս Ռուսաստանի հարավի համար կարևոր ռազմավարական և տնտեսական հենակետ էր: Բաքուն իր ձեռքում ունենալով՝ նախ ապահովելու էր իր թիկունքը բուլղարիկյան հնարավոր հարձակումներից և իր ազդեցության տակ էր վերցնելու ամբողջ Կասպից ծովը և միաժամանակ բարելավելու էր իր տնտեսական ու ֆինանսական վիճակը: Ուստի ստեղծված բարդ ռազմաքաղաքական պայմաններում գեներալ Ա. Դենիկինը ձգտում էր խնդրի լուծումն իրականացնել ոչ թե ռազմական ուժի միջոցով, այլ դիվանագիտական ճանապարհով՝ մշտապես Ադրբեջանին ու Վրաստանին պահելով ռազմական հարձակման սպառնալիքի տակ:

1919 թ. սեպտեմբերին գեներալ Ա. Դենիկինը նոտա հղեց Ադրբեջանի կառավարությանը՝ պահանջելով Ռուսաստանի հարավին ոչ միայն մատակարարել անհրաժեշտ քանակությամբ նավթ և նավթամթերք, այլ նաև Կասպիական նավատորմի միակ արհեստանոցում հնարավորություն ստեղծել հիմնովին վերանորոգելու Կամավորական բանակի ռազմանավերը<sup>19</sup>: Խնդրի շուրջ Ադրբեջանի կառավարությունում գոյություն ունեին իրարամերժ մոտեցումներ: Զինվորական նախարար Ն. Մեհմանդարովի կարծիքով Կամավորական բանակից սպասվող անախորժություններից խուսափելու համար անհրաժեշտ է ընդունել Ա. Դենիկինի նոտան, սակայն Ադրբեջանի կառավարությունը միտումնավոր ձգձգեց պատասխանը<sup>20</sup>: Հոկտեմբերին հետևեց Կամավորական բանակի հրամանատարության հաջորդ նոտան՝ խիստ տոնով: Բաքվում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության զինվորական կցորդ Ատամանովը (Ատամանյանը) հաղորդում է, որ գեներալ Ա. Դենիկինը Ադրբեջանի կառավարությունից պահանջեց դադարեցնել ռուսական մշակութային կենտրոնների, դպրոցների փակումը, ռուս քաղաքացիների իրավունքների ոտնահարումը և հալածանքները<sup>21</sup>: Այնուհետև Բաքվից հետ կանչվեց Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ներկայացուցիչ գեղապետ Կ. Պալիցինինը<sup>22</sup>: Դա արդեն նշանակում էր հարաբերությունների խզում Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի և Ադրբեջանի միջև: Ադրբեջանում և Վրաստանում լայնորեն տարածվեց այն լուրը, թե Կամավորական բանակը պատրաստվում է և շուտով կսկսի ռազմական գործողություններ Բաքուն գրավելու համար<sup>23</sup>:

Ադրբեջանը նախապատրաստվում էր դիմագրավել Ա. Դենիկինին ու միաժամանակ ռազմական գործողություններ սկսել Հայաստանի դեմ: Հետախուզությունը

<sup>17</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.293, թ.21:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, թ.16:

<sup>19</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.101, թ.92, գ.183, թ.36:

<sup>20</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.183, թ.122:

<sup>21</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-278, ց.1, գ.10, թ.15:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>23</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.183, թ.122:

հաղորդեց գեներալ Ա. Դենիկինին, որ նոյեմբերի 1-ին աղբրեջանական զորքերը գեներալ Ալի Ադա Շիխլինսկու հրամանատարությամբ երեք ուղղություններով (Շուշի, Ջեբրայիլ և Նախիջևան) ընդհանուր հարձակում են գործել Չանգեզուրի վրա և նոյեմբերի 5-ին գրավել են Խոզնավար և Բայանդուր գյուղերը<sup>24</sup>։ Չանգեզուրի վրա հարձակվելով՝ Աղբրեջանը նպատակադրվել էր գրավել Շարուր-Նախիջևանը և սահմանակից դառնալ Թուրքիային։ Դրանով նա լայն հնարավորություն էր ստանում Թուրքիայից անընդմեջ, ազատ և անարգել ներկրել անհրաժեշտ քանակությամբ զենք, զինամթերք և անգամ զինվորական զորամասեր։ 1919 թ. նոյեմբերի 4-ի «Ընդհանուր տեսություն Աղբրեջանի մասին» հետախուզական ամփոփագրում ասված է. «Կասկած չկա, եթե Աղբրեջանին հաջողվի իրականացնել Չանգեզուրյան օպերացիան, ապա Աղբրեջանը մեծ հնարավորություն կունենա լայն ռազմական գործողություններ ծավալել հարևան հանրապետության (Հայաստանի Հանրապետության - Գ. Պ.) և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի դեմ»<sup>25</sup>։ Հայաստանին և հարավից Ռուսաստանին սպասվող վտանգը կանխելու նպատակով Ա. Դենիկինը նոյեմբերի 9-ին Տազանրոզում ստորագրեց մի հրաման. «Ռուսական բանակի նկատմամբ աղբրեջանական իշխանությունների թշնամական վերաբերմունքի և Հայաստանի տարածքների վրա աղբրեջանական զորքերի ուխտադրուժ հարձակման կապակցությամբ հրամայում են նրանց զորքերում ծառայող բոլոր ռուս սպաներին թողնել զինվորական շարքերը»<sup>26</sup>։

Ի դեպ, Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ նոյեմբերի 20-ին Բաքվում կայանալու էր հայ-աղբրեջանական համաժողով՝ վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար։ Այդ մասին Ա. Խատիսյանը հայտնեց Կամավորական բանակի հրամանատարությանը և առաջարկեց հարկադրել Աղբրեջանի կառավարությանը՝ անմիջապես դադարեցնելու ռազմական գործողությունները Չանգեզուրում, այլապես այն կարող է հանգեցնել հրդեհի բորբոքման Աղրկովկասի ամբողջ տարածաշրջանում<sup>27</sup>։ Ա. Խատիսյանը նույն բովանդակությամբ հեռագրեր հղեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի՝ Հայաստանի գերագույն հանձնակատարի\* տեղապահ գեղապետ Ջ. Ռեյին<sup>28</sup>։

Ինչպես երևում է, Ա. Դենիկինը իր ստորագրած հրամանում կոշտ վերաբերմունք էր դրսևորել Աղբրեջանի կառավարության նկատմամբ նաև Չանգեզուրի վրա ռազմական ներխուժման առիթով։ Այդ մասին գեներալը հեռագրել էր նաև Փարիզ՝ ռուսական դեսպանական խորհրդի «Հատուկ քաղաքական խորհրդակցության» ներկայացուցիչ Ս. Սազոնովին՝ հրահանգելով. «...Խնդրել Գերագույն խորհրդին միջոցներ ձեռք առնել որպեսզի Կովկասում կարգն այլևս չը խանգարուի ու անակնկալ յարձակումների հնարատրութիւնը վերացվի»<sup>29</sup>։

<sup>24</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.227, ք.1-13, մանրամասն տե՛ս նաև Հ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 186-201, տե՛ս նաև Ա. Միմոնյան, 1919թ. նոյեմբերյան կռիվները Գորիսի շրջանում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2004, 2 (113), էջ 19-32։

<sup>25</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.183, ք.53։

<sup>26</sup> «Азербайджань», 6 декабря, 1919, Баку, «Յառաջ» լրագիր, Եր., 10 դեկտեմբերի 1919, ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.131, ք.127, գ.164, ք.58,71,256, ֆ.Պ-276, ց.1, գ.183, ք.123։

<sup>27</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.164, ք.67, 95-96։

\* 1919 թ. դեկտեմբերի 3-ին Փարիզից Թիֆլիս վերադարձավ Ռու. Հասկելը, որը մեկնել էր Փարիզի վեհաժողովին զեկուցելու Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի դրության մասին։

<sup>28</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.179, ք.268։

<sup>29</sup> ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.196, ք.120։

Օգտվելով Հայաստանի ծանր դրությունից՝ Ադրբեջանը փորձեց իրագործել իր ռազմավարական նպատակը՝ Ջանգեզուրով կապվել Թուրքիայի հետ: Մակայն նրա այդ փորձը ձախողվեց: Կարճատև կատաղի մարտերում հայկական ռազմական ուժերը արժանի հակահարված տվեցին հակառակորդին և նրան հետ շարտեցին ելման դիրքերը:

1919 թ. դեկտեմբերի 6-ին Բաքվում լույս տեսնող «Աзербայձյան» լրագրից հայտնի դարձավ գեներալ Ա. Դենիկինի նոյեմբերի 9-ի հրամանը, որը մեծ լարվածություն ստեղծեց Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական շրջաններում: «Ազերբայձյան» և վրացական «Եօրծա» լրագրերը հատուկ խմբագրականներով Ա. Դենիկինի այդ քայլը որակեցին որպես պրովոկացիա՝ ուղղված Անդրկովկասյան հանրապետությունների անկախության դեմ: 1919 թ. դեկտեմբերի 9-ին Ա. Խատիսյանը Լ. Եվանգուլյանին ուղղած նամակում հաղորդում է, որ, Ա. Դենիկինի հրամանը Երևանում մեծ տպավորություն է գործել և բոլորի մոտ այն զգացումն է, թե Հայաստանը կարծես սկսում է ճանաչվել<sup>30</sup>: Դեկտեմբերի 13-ին Երևանում լույս տեսնող «Յառաջ» լրագիրը «Գէն. Դենիկինի հրամանի առթիւ» հատուկ խմբագրականում տվեց իրավացի գնահատական (դեկտեմբերի 19-ին նույնը արտատպվեց Թիֆլիսում լույս տեսնող «Աշխատավոր» լրագրում). «Ինչ էլ լինի մեր վերաբերումը դեպի Կամավորական բանակի քաղաքական ու սոցիալական էությունը, անկարելի է չընդունել, որ նա, իբրև կազմակերպված ու որոշ քաղաքական նպատակների հետամուտ եղող մի ույժ, չի կարող հաշի չառնել, թե ինչ վիճակի մեջ է գտնում իր թիկունքը, ինչպիսի հարաբերություններ են ստեղծում իր կողքի երկրներում: Այս տեսակետից Դենիկինն, ի հարկէ, չէր կարող ուշադրություն չդարձնել այն քայլերի վրա, որոնք վերջերս տաճիկների կողմից ձեռնարկվում են Կովկասում և, մասնավորապէս, Ադրբեջանում ու Դաղստանում»<sup>31</sup>: Այնուհետև խոսելով տաճիկ ազգայնականների ու բոլշևիկների կապի մասին՝ լրագիրը ներկայացնում է թուրք փաշաների գործողությունները՝ ուղղված Հայաստանի ու Կամավորական բանակի դեմ, վերջինս բնականաբար չէր կարող անտարբեր դիտել այդ ամենը և պետք է դիմեր գործնական քայլերի:

Լրագիրը վերջում այն համոզմունքն է հայտնում, որ «...Եթէ խոցելի է Դենիկինի միջամտությունը Ադրբեջանի գործերին, ավելի ևս դատապարտելի է Նուրի փաշաների միջամտությունը: Եվ քանի տաճիկ ազգայնականներն Անդրկովկասը պիտի նկատեն թատերաբեմ իրենց դավադրությունների համար, քանի որ էնվերների ու Մուստաֆա Քեմալների գործակալները հովանավորություն կգտնեն այստեղ, կամավորականների վարմունքի դեմ զայրանալը միանգամայն անտեղ կլինի: Նա, ով հովանավորում է Նուրի փաշաներին, ու Քեմալի բեյերին ու Խալիլ բեյերին, նա, ով ամէն բոլոր կանչում է Անդրկովկասի գործերին միջամտելու Պօլսի ու Մրվազի փաշաներին, ի հարկէ պետք է ենթակա լինի այդպիսի անակնկալների: Անդրկովկասն ազատ պիտի լինի, այո՛՝ *Անդրկովկասէյան հանրապետություններն զերծ պեպք է լինեն որևէ միջամտությունից, բայց ոչ միայն հյուսիսի միջամտությունից, այլ և հարաւի, որովհետև քանի կա հարաւը, հյուսիսը կլինի ու կլինի*»<sup>32</sup> (ընդգծումը մերն է - Գ. Պ.):

Ա. Դենիկինի նոյեմբերի 9-ի հրամանի դիվանագիտական քայլը նպատակաուղղված էր ինչ-որ ձևով կանխելու Ռուսաստանի հարավին և Հայաստանին սպառնացող վտանգը: Հրամանի հրապարակումը, անշուշտ ունեցավ նաև որոշակի

<sup>30</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 211, թ. 6:

<sup>31</sup> «Յառաջ» լրագիր, Եր., 13 դեկտեմբերի 1919 թ., «Աշխատավոր» լրագիր, Թիֆլիս, 19 դեկտեմբերի 1919 թ.:

<sup>32</sup> «Յառաջ» լրագիր, նույն տեղում:

հետևանքներ. նոր ուժով և լայնորեն շրջանառվեց Կամավորական բանակի և Հայաստանի միջև իբր գոյություն ունեցող ռազմական գաղտնի դաշինքի առասպելը: Շրջանառվեց նաև այն համոզմունքը, թե իբր Կամավորական բանակը և Հայաստանը նախապատրաստվում են հարձակման Ադրբեջանի վրա: Փաստորեն այդ կեղծ լուրը Ա. Դենիկինի ձեռքում դարձավ գործիք՝ զսպելու Ադրբեջանի և նրա դաշնակիցների ռազմատենչ տրամադրությունները, և վերջինս չհամարձակվեց ռազմական գործողություններ սկսել Կամավորական բանակի դեմ:

Այսպես կոչված հայ-ռուսական ռազմական դաշինքի մասին կեղծ լուրի միտումնավոր տարածմանը նպաստեցին նաև բուլշևիկյան առանձին քաղաքական գործիչներ: Այդ օրերին Ս. Կիրովը հայտարարեց, որ Հայաստանի կառավարությունն ունի իր տարածքները ընդարձակելու մեծ պլաններ և լայնորեն օգտվում է Համաձայնության երկրների ու Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի համակրանքից ու պաշտպանությունից, որ Ա. Դենիկինի և Հայաստանի միջև գոյություն ունի գաղտնի ռազմական դաշինք<sup>33</sup>: Գաղտնիք չէր, որ Հայաստանը բարեկամական հարաբերությունների մեջ էր Կամավորական բանակի հետ. դրանով բուլշևիկները փորձում էին հարվածել իրենց դեմ պայքարող ուժերի թվացյալ դաշնակցին՝ Հայաստանի Հանրապետությանը, այն դեպքում, երբ Հայաստանի կառավարությունը պահպանում էր չեզոքություն՝ չմիջամտելով ո՛չ խորհրդային Ռուսաստանի և ո՛չ էլ Ա. Դենիկինի պայքարին:

1919 թ. մայիսի 9-ի հրամանը զսպող դեր կատարեց նաև Հայաստանի կառավարողների նկատմամբ: Ադրբեջանի վարչապետ Ն. Ուսուբբեկովը հայտնեց, որ Ադրբեջանը ամենից քիչ է շահարգազուրկ գեների ուժով լուծելու սահմանային հարցերը Հայաստանի հետ, քանի որ մեծ վտանգ է սպառնում հյուսիսից<sup>34</sup>: Իսկ Ա. Խատիսյանն էլ տեղեկացնում է, որ Ա. Դենիկինի հրամանը հայտնի դառնալուց հետո թաքարական հարձակումների սրությունը մեղմացավ<sup>35</sup>:

Վրաստանի պատվիրակության անդամները, անհանգստացած գեներալ Ա. Դենիկինի հրամանից, Փարիզից անմիջապես հրահանգեցին իրենց կառավարությանը լավ հարաբերություններ պահպանել Հայաստանի հետ: Պահանջեցին նաև ներկայացուցիչ ուղարկել Եկատերինոդար՝ գեներալի հետ բանակցելու<sup>36</sup>: Լ. Եվանգուլյանը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հղած հեռագրում տեղեկացնում էր, որ դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած հայ-վրացական խորհրդակցության ժամանակ Ե. Գեգեկորին առաջարկել է վերականգնել Անդրկովկասի երեք հանրապետությունների բարիդրացիական հարաբերությունները: Լ. Եվանգուլյանը զգուշացնում էր նաև, որ մեր պատգամավորները պետք է զգոն լինեն, որովհետև չի բացառվում, որ նրանք դարձյալ առաջարկեն միասնական ճակատ ստեղծել գեներալ Ա. Դենիկինի դեմ: Հեռագրի վերջում նորից զգուշացնում էր, որ հնարավոր է՝ ձախողվի Բաքվում հրավիրվող վեհաժողովը<sup>37</sup>:

Այդ օրերին ստեղծված իրավիճակից անհանգստացած Ադրբեջանի կառավարությունը առաջարկում էր զիջումներ անել Հայաստանին, եթե նա անմիջապես սկսի բանակցությունները: Հայաստանի կառավարությունը հնարավոր համարեց բանակցել. «...Խօսիլ և իմանալ թե ինչ զիջումներ են անում տաճիկները»<sup>38</sup>:

<sup>33</sup> Տե՛ս Ս. Կиров, Статьи, речи, документы, 1912-1921, т. 1, М., 1936, էջ 143:

<sup>34</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-223, ց.1, գ.113, ք.78:

<sup>35</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-199, ց.1, գ.211, ք.7:

<sup>36</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.Պ-57, ց.5, գ.205, ք.6:

<sup>37</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-276, ց. 1, գ. 196, ք. 46, գ. 179, ք. 279:

<sup>38</sup> ՀԱԱ, ֆ. Պ-57, ց. 5, գ. 205, ք. 5:



Այսպիսով, Հայաստանի համար այդ ծանր ժամանակահատվածում նրան աջակցեց Ա. Դենիկինը: Այդ է վկայում նրա վերոհիշյալ հրամանը, որը տրվել էր Հայաստանի տարածքների վրա ադրբեջանական ուժերի ուխտադրուժ հարձակման կապակցությամբ՝ հարկադրելով դադարեցնել ագրեսիան: Ա. Դենիկինի հրամանը զգալի չափով մեղմեց Հայաստանի նկատմամբ հարևանների անբարյացակամ վերաբերմունքը: Կամավորական բանակի գլխավոր հրամանատարության՝ Հայաստանին աջակցող այդ քայլը պատահական չէր: Վրաստանն ու Ադրբեջանը ռուսական բանակի նկատմամբ թշնամական էին տրամադրված. նրա հեճարման Անդրկովկասում Հայաստանն էր, որին անհրաժեշտ էր աջակցել: Սակայն դա բացասաբար ընդունվեց Համաձայնության երկրների կողմից, որոնց նպատակն էր Անդրկովկասից Ռուսաստանին դուրս մղելը, քաղաքականություն, որն իր ուժը պահպանում է առ այսօր:

Դեկտեմբերի 9-ին Լ. Եվանգուլյանին ուղղած մեկ այլ նամակում Ա. Խատիսանը հաղորդում է. «Ինձ թվում է այդ հրամանը Հայաստանի կիսաճանաչումն է ռուսական Կամավորական բանակի կողմից: Ես նկատի ունեմ, որ Անգլիան և Ամերիկան չեն ողջունում մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ և կարծում են, որ նրան ու Ռուրդրոպին այդ հրամանը դուր չի գա: **Ահա քե ինչու այժմ նորից դրվում է երեք հանրապետությունների միջև կոնֆեդերացիայի հարցը: Այն սուր ծայրով ուղղված է Ռուսաստանի դեմ**»<sup>39</sup> (ընդգծումը մերն է - Գ. Պ.): Ռուսական ազդեցության տարածման դեմ առաջադրվեց Անդրկովկասի հանրապետությունների միավորման խնդիրը, որը պետք է լուծվեր կոնֆեդերացիայի ստեղծման ճանապարհով: Առաջ էր գալիս նոր քաղաքական իրադրություն, որը Հայաստանի ղեկավարությունից պահանջում էր ձեռնարկել զգույշ ու ողջամիտ քայլեր: Լավ ըմբռնելով նոր իրավիճակը՝ Ա. Խատիսյանը գրում է. «Անհրաժեշտ է զգույշությամբ խուսանալով Անտանտի, Դենիկինի և Կովկասյան համադաշնության միջև: Դրա համար ես պետք է իմանամ յուրաքանչյուր մանրամասնություն Թիֆլիսում տիրող տրամադրությունների վերաբերյալ»<sup>40</sup>:

Ա. Խատիսյանը Բաքվում հրավիրվող հայ-ադրբեջանական համաժողովին մասնակցող Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը (Տ. Բեկզադյան\*, Վ. Փափազյան, Մ. Հարությունյան և Հ. Արդուբյան) հանձնարարեց. «Եթե կոնֆերանսում Ադրբեջանի կողմից դուրի կոնֆեդերացիայի հարցը, մեր պատիրակները այս հարցի շուրջը խօսելու են, բայց մի եզրակացութեան չեն գալու»<sup>41</sup>: Դեկտեմբերի 9-ին Բաքվում Մ. Հարությունյանի, Հ. Արդուբյանի և վարչապետ Ն. Ուսուբբեկովի հանդիպման ժամանակ վերջինիս առաջին հարցը եղավ. «Կոնֆեդերացիայի մասին պատասխան բերել էք, թե չէ»<sup>42</sup>: Բաքվում ընդունելություն չգտան Հայաստանի պատվիրակության առաջ քաշած հարցերը՝ ժամանակավոր դեմարկացիոն գծի հաստատում, գաղթականների ընդունում, տեղավորում և առևտրի ու երկաթուղային պայմանագրերի կնքում և այլն: Հայաստանի պատվիրակությունը հեռագրեց Երևան՝ արտաքին գործերի նախարարություն՝ տեղեկացնելով, որ ադրբեջանցիները առայժմ ոչ մի հարցի մասին խոսել չեն ուզում. «...Նրանք առաջ են տանում միայն ու միայն կոնֆեդերացիայի հարցը»<sup>43</sup>:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. Պ-199, ց.1, գ. 211, ք. 9:

<sup>40</sup> Նույն տեղում:

\* 1920թ. փետրվարի 2-ին Նախարարների խորհուրդը հիվանդության պատճառով ազատեց Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին, նրա փոխարեն նշանակելով Մարտիրոս Հարությունյանին:

<sup>41</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 158, ք. 116:

<sup>42</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 365, ք. 24:

<sup>43</sup> ՀԱԱ, ֆ. Պ-57, ց.5, գ.205, ք.3:

Նույն օրը՝ դեկտեմբերի 9-ին, Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը քննարկեց Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների առաջարկը Անդրկովկասյան կոնֆեդերացիա կազմելու մասին: Խորհրդի նիստը արձանագրեց, որ «...Դեմիկիմի վերաբերմունքը դեպի հայերը լավ է ընդհանրապես. այդ բանը նկատում են և գիտեն մեր հարևանները: Մանաւանդ մեծ տպաւորութիւն է թողել Ադրբայջանի վրայ Դեմիկիմի այն կարգադրութիւնը, որով նա արգելում է ոռւս սպաներին ծառայել Ադրբայջանի զօրքի մեջ: ... Կառավարութիւնը կարծում է, որ հնարաւոր է Ադրբայջանի հետ յարաբերութեան մէջ մտնիլ և կապիլ զանազան դաշնագրեր, բացի զինվօրականից, օրինակ՝ մաքսային, սահմանային, երկաթուղային և այլն»<sup>44</sup>:

Կոնֆեդերացիայի հարցում Հայաստանի Հանրապետության մոտեցումը որոշակի էր ու միանգամայն ճիշտ: Բացահայտելով հարևանների իրական նպատակը՝ ռազմական դաշինք ստեղծել Ա. Դեմիկիմի դեմ՝ Հայաստանը համաձայն էր նրանց հետ մտնել դաշնակցային կապի մեջ, բայց ոչ ռազմական դաշինքի:

Ի դեպ, Ա. Խատիսյանի հետ գրույցի ժամանակ Ու. Հասկելը նույնպես խորհուրդ էր տվել կոնֆեդերացիայի առաջարկն ընդունելու դեպքում խուսափել ռազմական դաշինք կնքելուց, այն վնասակար կլինի Հայաստանի համար, որովհետև Ռուսաստանի հարավից ներկրվում է 240 հազար փութ հաց և սերմացու: Թիֆլիսում Ու. Հասկելը Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամներին առաջարկել էր ժամանակավորապես դրոշել սահմանները, առևտրական և այլ տեսակի պայմանագրեր կնքել, սակայն. «Ոչ մի դեպքում չը միանալ նոցա հետ Դեմիկիմի դեմ»<sup>45</sup>: Բանն այն էր, որ Համաձայնության երկրները դեմ էին բուլշևիզմի դեմ պայքարող Ա. Դեմիկիմի ուժերի ջլատմանը և պահանջում էին շխանգարել նրան՝ բուլշևիզմի հետ հաշիվները մաքրելու: Ահա թե ինչու Ու. Հասկելը և Մ. Ուորդոուպը, կողմ լինելով Անդրկովկասյան հանրապետությունների միության ստեղծմանը, գտնում էին, որ նրանք ռազմական դաշինք չպետք է կնքեն, այլ գլխավորապես պետք է ծանրաման տնտեսական, երկաթուղային, փոստ-հեռագրական և տրանզիտային պայմանագրերի վրա<sup>46</sup>: Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը, ելնելով այդ ամենից, որոշեց «... Այժմ անհնար է կոնֆեդերացիա կնքել Վրաստանի և Ադրբեջանի հետ, քանի որ մեր սահմանները վերջնականապես հայտնի չեն: Կոնֆեդերացիա կնքել այն պայմաններով ինչ պայմաններ առաջարկած են, կը նշանակէ նաև զինուորական դաշն կնքել ընդդէմ Ռուսաստանի, որ դորանով մենք թույլ փրած կը լինենք թուրքական զօրքերին անցնել մեր երկրով ընդդէմ Դեմիկիմի և այլն»<sup>47</sup> (ընդգծումը մերն է - Գ. Պ): Հայաստանի կառավարությունը հնարավոր էր համարում ընդունել կոնֆեդերացիայի գաղափարը, եթե արդարացի լուծվեին տարածքային հարցերը Ադրբեջանի ու Վրաստանի հետ, և երկրորդ՝ եթե պայմանագրի մեջ մտցվեր այնպիսի մի կետ, որ դաշինքն ուղղված չէ Ռուսաստանի դեմ<sup>48</sup>:

Գոյություն ունեւր նաև մեկ այլ կարևոր հանգամանք. Հայաստանի կառավարությունը չէր կարող մտնել կոնֆեդերացիայի մեջ առանց Արևմտյան Հայաստանի հարցի լուծման: «Դրօշակ» հանդեսը այդ առիթով գրում էր. «Մեր հարևանների համար Կովկասը վերջանում էր լաւագոյն դէպքում 1914թ. սահմանով, իսկ

<sup>44</sup> Նույն տեղում, տե՛ս նաև «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք Ե, «Մայր Աթոռ ս.Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.)», Եր., 1999, էջ 203:

<sup>45</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 365, ք. 24:

<sup>46</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 440, ք. 5:

<sup>47</sup> ՀԱԱ, ֆ. Պ-57, ց. 5, գ. 2005, ք. 3:

<sup>48</sup> ՀԱԱ, ֆ. Պ-200, ց. 1, գ. 440, ք. 6, ց. 2, գ. 56, ք. 16, ֆ. 276, ց. 1, գ. 116, ք. 129:

առհասարակ, նրանք (Աղրբեջան, Վրաստան - Գ. Պ) մեկնում էին սահմանային այն փաստից, որ ստեղծել էին թիրքերը: Հայերը չէին հաշտում այդ փաստի հետ. նրանց քաղաքական գիտակցութեան մէջ Հայաստանը միայն Մասսի մի կողմը չէր, այլ և միւս կողմը: Այսպիսի հոգեբանական ու փաստական պայմաններում – ի՞նչ կոնֆեդերացիա»<sup>49</sup>:

Անդրկովկասյան կոնֆեդերացիան, վրացիների և աղրբեջանցիների պատկերացմամբ, պետք է միայն ուղղված լինի Ռուսաստանի դեմ՝ հենվելով Թուրքիայի վրա, այսինքն՝ «...Թիւրքի հետ ոռւսի դէմ»<sup>50</sup>:

Աղրբեջանի և Վրաստանի կողմից կոնֆեդերացիայի առաջարկը նորութուն չէր. այդ մասին նրանք հիշում էին միայն այն ժամանակ, երբ վտանգ էր սպասվում Հյուսիսից: Նման առաջարկ արվել էր Վրաստանի և Աղրբեջանի կողմից դեռևս 1919 թ. ապրիլ-մայիս ամիսներին, երբ սպառնալիք էր ստեղծվել գեներալ Ա. Դենիկինի կողմից: 1919 թ. մայիսի 31-ին Փարիզում Աղրբեջանի պատվիրակության նախագահ Ա. Թոփչիբաշևի հետ հանդիպման ժամանակ Ա. Ահարոնյանը և Հ. Օհաջանյանը նշել էին, որ դեմ չեն եղել և այժմ էլ դեմ չեն լինի. «...Կովկասեան ժողովուրդների միութեան, բայց նախ պետք է որ դրանցից իւրաքանչիւրը իր պետութիւնն ունենայ: Մեզ համար առ այժմ խնդիրը բարդանում է Թիւրքաց Հայաստանով, որին մենք պիտի միանանք. բայց այդ հարցը դեռ պաշտօնապէս որոշուած չլինելով, մենք անկարող ենք նոր կոմբինացիաներ անել քաղաքական՝ առանց թիրքահայերի: Իսկ միմակ Կովկասեան Հայաստանը երբեք չի յանձն առնի այլեւս առանձին ներկայանալ»<sup>51</sup>:

«Դրօշակ» հանդեսը Հայաստանի հարևաններին իրավացիորեն հիշեցնում էր, որ եթե Անդրկովկասյան երեք հանրապետությունների միությունը խիստ անհրաժեշտություն է, ապա ինչու 1918 թ. մայիսի վերջին քանդեցին. «...Կովկասի միութիւնը, Մէյմի շրջանում, քանդուեց, ինչպէս յայտնի է, կովկասեան ժողովուրդների ներքին հակամարտութիւնների և, մեծ մասամբ, թիրքական ճնշումի հետևանքով: Վրացիները, Ժողովնիայի գլխաւորութեամբ, նախօրոք գաղտնաբար համաձայնելով Գերմանիայի հետ, լրեցին համակովկասեան դիրքերը: Հրապուրուած թիրքերից՝ աղրբեջանցիները Կովկաս բերին Վէհիբ և Նուրի փաշաների գորքերը: Թիւրքերի անմիջական բռունցքի տակ էր, որ տեղի ունեցաւ Կովկասի բաժանում: ...Վեհիբ փաշան սրով գծեց այն սահմանագիծը, որ պահանջում էին աղրբեջանցիները՝ ողորմածաբար հայերին թողնելով Երևանը: Հետագային էլ, մինչև թիւրքերի պարտութիւնն ու հեռանալը, Աղրբեջանի ղեկավարները ոչ մի փոփոխութիւն չմտցրին իրենց մտայնութեան ու գործնական քաղաքականութեան մեջ: ...Այսպիսի պայմաններում ուզում էին աղրբեջանցի գործիչները կոնֆեդերացիա ստեղծել»<sup>52</sup>: Բնական է, որ Հայաստանի կառավարությունը չզնայ նման ձեռնարկի, որովհետև չէր վստահում Անդրկովկասյան կոնֆեդերացիայի առաջարկի հեղինակների անկեղծությամբ:

1920 թ. հունվարի 4-ին Նախարարների խորհուրդը դարձյալ անդրադարձավ կոնֆեդերացիայի հարցին: Խորհրդում լսվեց Բաքվի համաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության զեկույցը: Պատգամավոր Մ. Հարությունյանը հաղորդեց, որ Աղրբեջանը (դեկտեմբերի 14-ին սկսված հայ-աղրբեջանական համաժողովը նույն ամսի 21-ին ընդհատվեց) ձախողեց համաժողովի

<sup>49</sup> «Դրօշակ» ամսագիր, Բոստոն, 1931, սեպտեմբեր, էջ 198:

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 200:

<sup>51</sup> Ա. Ահարոնյան, նշվ. աշխ., էջ 23-24:

<sup>52</sup> «Դրօշակ» ամսագիր, Բոստոն, 1931, սեպտեմբեր, էջ 196-197:

աշխատանքը. «...Այդ բոլորը ինչ որ մի խաղեր էին ուրիշ նպատակների հասնելու համար»<sup>33</sup>: Հայաստանի կառավարությանը հայտնի էր, որ 1919 թ. նոյեմբերի 27-ին Բաքվում բոլշևիկների և թուրքերի միջև կայացել էր մի համաձայնություն, որով տաճկական զորքերը Հայաստանի վրայով պետք է անցնեն՝ «...Դեմիկիմի թիկունքը բռնելու համար»<sup>34</sup>:

1920 թ. հունվարին փոխվեց քաղաքական իրադրությունը: Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը պարտություն կրեց բոլշևիկների դեմ մղվող արյունալի քաղաքացիական պատերազմում: 1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդային բանակը գրավել էր Ռոստովը, իսկ 1920 թ. մարտի վերջին՝ Դաղստանը և ամբողջ Հյուսիսային Կովկասը: 1920 թ. հունվարի 21-ին Ա. Սիարոնյանը Փարիզից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին ուղղած նամակ-գեկույցում հաղորդում է. «...Բոլշևիկների առաջխաղացումը և Դեմիկիմի անհույս պարտությունը ընդհանուր անհանգստություն է պատճառում քաղաքական շրջաններին: Աշխատում են բոլշևիկների առաջը փակել գեթ Կովկասյան լեռներում: Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչները – Թուֆչիբաշև և ինչպես Գլետիձե, Ծերեթելի և Ավալով, երեք օր առաջ հանդիսավոր խոստումն արին (վեհաժողովին - Գ. Պ.) կովել բոլշևիկների դեմ իրենց բանակներով, թե նրանց գեներալ ռազմամթերք մատակարարվի: Մի բան որ ինձ համար հաստատ է, այդ այն է, որ հայերը ոչ թե պետք է բոլշևիկների դեմ կռվեն, այլ միայն ու միայն իրենց սահմանները պաշտպանեն թյուրքերից»<sup>35</sup>:

Ճիշտ է, գեներալ Ա. Դեմիկիմի պարտության հետևանքով Անդրկովկասյան կոնֆեդերացիայի գաղափարը կորցնում էր իր նշանակությունը, սակայն Ադրբեջանի և Վրաստանի դիվանագիտությունը փորձում էր Հայաստանին դարձյալ ներքաշել կոնֆեդերացիայի մեջ՝ այս անգամ առաջարկելով միասնական ռազմական ճակատ ստեղծել Խորհրդային Ռուսաստանի դեմ, որին սկզբունքորեն դեմ էր Հայաստանի կառավարությունը:

1920 թ. փետրվարի 13-ին Բաքվից Երևան ժամանեց անգլիական զինավոր հանձնակատար Մ. Ուորդոյրպը, որի նպատակն էր ազդել Հայաստանի կառավարության վրա, Վրաստանի և Ադրբեջանի հետ միություն ստեղծել ու հնարավոր բոլոր միջոցներով կասեցնել բոլշևիկների ներխուժումը: Մ. Ուորդոյրպը իր մտառությունները ներկայացնելու համար խնդրեց մասնակցել Նախարարների խորհրդի նիստին: Փետրվարի 14-ին հրավիրված խորհրդի նիստում նա բացորոշ ներկայացրեց Անգլիայի դիրքորոշումը. «Ես անձամբ, ինչպես նաև անգլիական կառավարությունը, ռուսատեսաց ենք: Մեր շահերը Արևելքի մեջ ամենուրեք հակառակ են Ռուսաստանին: Ով ռուսասեր է, ան կասկածելի բարեկամ է մեզ համար: Ով Ռուսաստանին հակառակ քաղաքականութեան կը հետեւի, ան մեր իսկական բարեկամն է, միշտ արժանի մեր օգնութեան: Մեր բոլոր քայլերը պետք է մեկնաբանեք այս տեսակետէն: ...Անդրկովկասի բոլոր հանրապետութիւններն այժմ ունին մէկ մեծ ու վտանգաւոր թշնամի, եւ այդ թշնամին Ռուսաստանն է: Այդ թշնամուն դեմ է, որ դուք պետք է ուղղէք ձեր բոլոր ոյժերը՝ ստեղծելով ընդհանուր ճակատ մը ձեր հարեւաններուն հետ միասին: **Դուք պէտք է սպառազինուիք եւ միանաք Հիւսիսի դէմ: Արոր համար անհրաժեշտ է, որ օր առաջ քաղաքական եւ ռազմական դաշինք կնքէք Վրաստանի եւ Արարկէջանի հետ՝ կոնֆեդերէրէշըն մը կազմելով**»<sup>36</sup> (ընդգծումը մերն է - Գ. Պ.): Կառավարության անդամները, հակադրվելով

<sup>33</sup> ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.365, ք.25:

<sup>34</sup> «Յառաջ» լրագիր, Եր., 25,26 փետրվարի, 1920:

<sup>35</sup> ՀԱԱ, ֆ, Պ-200, ց. 1, գ. 290, ք. 63:

<sup>36</sup> «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1950, հունիս, էջ 29:

Մ. Ռուդրոպյան, պատասխանեցին, թե նա մոռացության է տալիս, որ Հայաստանի գլխավոր վտանգը Հարավն է, քան Հյուսիսը. «...Ազատեցեք մեզ այդ մահացու վտանգէն, եւ այն ժամանակ մենք համաձայն կըլլանք ձեզ հետ: Այն ժամանակ շատ հեշտ կըլլայ մեզ համար ընդհանուր լեզու գտնել մեր հարեւաններուն հետ, որոնք ձեզ նման չեն ուզեր այժմ ճանչընալ Հարաւի վտանգը: Բացի այդ, մեր հարեւաններուն հետ մենք ունինք սահմանային կարեւոր վեճեր, որոնց գոհացուցիչ լուծումը միայն կարող է ճանապարհի հարթել մեզ բոլորիս բաղձալի քոնֆետերէշընին համար»<sup>57</sup>: Գլխավոր հանձնակատարը կառավարության հիմնավորված բացատրություններին պատասխանեց. «...*Չեր սահմանային վեճերը չեր հարեւաններուն հեպ երկրորդական նշանակութիւն ունին: Գլխաւորը չեր միութիւնն է ընդհանուր բընամիի Հիւսիսի դէն*»<sup>58</sup> (ընդգծումը մերն է - Գ.Պ.):

1920թ. ապրիլին Թիֆլիսում հրավիրված Անդրկովկասյան երեք հանրապետությունների վեհաժողովի օրակարգում դրված կոնֆեդերացիայի հարցի քննարկումը մնաց անավարտ Ադրբեջանի խորհրդայնացման պատճառով:

Այսպիսով, 1919 թ. աշնանը Հայաստանի Հանրապետության ծանր ռազմաքաղաքական դրությունը հանրապետության ղեկավարության առջև դրեց դժվարին խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր կիրառել չափազանց զգույշ ու շրջահայաց քաղաքականություն: Անհրաժեշտ էր բացահայտել հարևանների քաղաքական խաղերի իրական նպատակները, խափանել նրանց զավթողական գործողությունները: Այդ գործում Հայաստանի Հանրապետությանը աջակցեց Ռուսաստանի հարավի Կամավորական բանակը: Ա. Դեմիկիևի նոյեմբերի 9-ի հրամանը խառնեց Ադրբեջանի, Վրաստանի ու Թուրքիայի հաշիվները Հայաստանի Հանրապետության հարցում, թուլացրեց նրա շուրջը ստեղծված լարվածությունը: Ապարդյուն անցան Ռուսաստանի Կամավորական բանակի դեմ ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու և նրա մեջ Հայաստանի Հանրապետությանը ներքաշելու հարևանների փորձերը:

**Г. А. ПЕТРОСЯН - *Позиция Республики Армения в отношении создания Закономфедерации (август 1919 - апрель 1920)***. - Со стороны Азербайджана и Грузии идея создания федерации была не нова, об этом они вспоминали, как только нависала опасность с Севера. Такое предложение было сделано со стороны Грузии и Азербайджана еще в апреле — мае 1919 г., когда возникла угроза со стороны генерала А. Деникина. Она смешала планы Азербайджана, Грузии и Турции насчет Армении, ослабила создавшуюся напряженность вокруг нее. Тщетными оказались также попытки создания военно-политического блока против Добровольческой армии юга России и вовлечения в него Республики Армения. Идея конфедерации провалилась, несмотря на то, что на ее реализацию большие усилия потратили Грузия, Азербайджан и страны Соглаasia, но им не удалось направить Республику Армения на антирусские позиции.

<sup>57</sup> Նույն տեղում:

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 30: